ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Ամերիկահայոց թեմի հաստատման 100-ամյակի հանդիսություններին մասնակցելու համար Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետն ապրիլի 14-ին Մայր Աթոռից, բժշկական քննության նպատակով, նախ մեկնեց Լոնդոն, ապա և՝ Նյու Յորք:

ԱՄՆ-ում Նորին Սրբությունը նախագահեց Ամերիկահայոց թեմի հաստատման 100-ամյակին նվիրված հանդիսություններին ու եկեղեցական արարողություններին՝ ամենուր Հայրապետական իր օրհնությունը բաշխելով և պատգամները հղելով ամերիկահայությանը, ինչպես նաև մասնակցեց Հայոց Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի երեք թեմերի հոգևորականաց համագումարին և ԱՄՆ-ի Արևելյան թեմի տարեկան 96-րդ պատգամավորական ժողովին:

Հայրապետական այս այցելությունն արդյունավորվեց նաև միջազգային և միջեկեղեցական մի շարք կարևոր հանդիպումներով, որոնց ընթացքում Նորին Սրբությունը տեսակցեց Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ-ի և քույր Եկեղեցիների Ամերիկայում գործող ներկայացուցիչների հետ, մասնակցեց էկումենիկ համատեղ պաշտամունքային արարողությունների: Նյու Յորքում Վեհափառ Հորը շնորհվեց ԱՄՆ-ի Episկոպոսական Եկեղեցու Աստվածաբանական քոլեջի Պատվավոր Դոկտորի աստիճան: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանի, ԱՄՆ-ի պետական և նահանգային իշխանությունների պաշտոնատարների հետ հանդիպումներում քննարկվեցին Հայաստանի կացությանը, Արցախյան հիմնախնդրին, ամերիկահայությանը և Հայոց Եկեղեցու գործունեությանն ու դերին վերաբերող մի շարք հարցեր:

Ամերիկահայոց թեմի կազմավորման 100-ամյակի հանդիսությունների ավարտից հետո, օգոստոսի 22-ին, վերադառնալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, սեպտեմբերի 22-ին Վեհափառ Հայրապետը վերստին մեկնեց ԱՄՆ՝ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի և Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած ՀՀ պաշտոնական պատվիրակության հետ՝ մասնակցելու Միացյալ Հայկական Ֆոնդի 100-րդ թռիչքի առիթով կազմակերպված հանդիսությանը, որի ավարտից հետո Նորին Սրբությունը ԱՄՆ-ում մնաց բժշկական մի նոր ստուգում անցնելու համար:

Շուտափույթ ապաքինում և բարի վերադարձ Հայոց Հայրապետին: